

ներկայացուցած տիպարներուն մէջ կը ձգտի գտնել մէկ կողմէ բարձրագոյն արժէքներ, իտէալական առաքինութիւններ եւ միւս կողմէ վատութիւններ, ծայրայեղ անկումներ: Մարդկութեան մտատիպար ազնուացման ծարաւի իր հոգին խոյս կուտայ միջակութիւններէ. տպաւորիչ ըլլալու համար, օրինակ, մէկ կողմէ մեզ կը ներկայացնէ *Վա՛խ, ես մեռնեմ*ին մէջ, հայ կիներ գոր էրիկը կ'ատէ, կը վռնտէ տունէն, բայց որ իր ամուսինն կաթոգին սիրովը կը տոչորի, եւ երբ ամբողջ հասարակաց կարծիքը անարգանքի սիւնին կը գամէ այդ վատշուէր ամուսինը, ինք լալահառաչ կ'իյնայ անոր դիակին վրայ «*Վա՛խ, ես մեռնեմ*» ողբալով: Միւս կողմէ, *Սեւ հաւը կանչեցին* մէջ՝ դարձեալ հայ կիներ՝ որ այս անգամ անարգօրէն կը դաւէ ամուսնական սրբութեան դէմ: Հեղինակը իր դիտաւորութեանը մէջ կատարելապէս յաջողած է: Պոստ մը ջուրը իր պարզութեանը մէջ սաստկապէս յուզիչ է եւ բարացուցական. գաւառին անկիւնները տակաւին տիրող թանձրամիտ եւ աղետաւոր մոլեռանդութեան բացատրութիւնն է, գոր Զարդարեան կուտայ՝ առանց սակայն ռելէ մեկնաբանութեան. կը պատմէ ու կ'անցնի, ընթերցողը սոսկումէ սառեցնելով այն անգիտակից ռճիրին առջեւ, գոր բարի մամիկ մը կը գործէ իր սիրական թոռնիկին վրայ՝ անսուաղ մահացնելով զայն առասպելական սուրբի մը գեղեցիկ աչուրներուն համար: Այս սրտաշարժ վիպակը անով կը տարբերի միւսներէն որ Զարդարեան հոս ժլատ է խորհրդածութեանց մէջ, նիւթին պահանջուած պարզութիւնը ու միամտութիւնը կը պահէ մինչեւ վերջը:

*Յայգալոյտով* Զարդարեան կը ներկայանայ մեզ նաեւ իբրեւ հովուերգակ բանաստեղծ: Մարդկային կիրքերուն խորքերը թափանցող իր մանրագնին հոգին, այնքան գլոխ եւ այնքան աղապատալից, չէր կրնար նաեւ չարպտել բնութիւնն իր հրաշագան արտաքինին, իր բարբառուն ու բաբախուն երփներանգութեան մէջ: Բնագաւառին կապոյտ երկինքը, կանանչ ծմակը, մտերիմ լեռը, մենաւոր ծառը ու խորհրդաքօղ անտառը չէին կրնար